**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1**

«24» օգոստոսի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**
1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Թամարա Հովհաննիսյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**
1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատում, նախագահի ընտրություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների, կաբինետների վարիչների աշխատանքային պլանների հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների քանակն ու տեսակները:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
7. Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդնում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմի հաստատման և նախագահի ընտրության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը առաջարկեց հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմը, հաշվի առնելով դրանում ընդգրկված առարկաների ուսուցիչներին, ինչպես նշեց, որ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում առաջադրվել է «Պատմություն» առարկայի ուսուցչուհի, 2021-2022 ուսումնական տարում մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյանը: Զեկուցողն առաջարկեց Մերի Դանիելյանին 2022-2023 ուսումնական տարում նույնպես ընտրել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Ա. Աբգարյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին ամփոփոխել թողնել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահին և 2022-2023 ուսումնական տարում նույնպես առաջարկեցին Մերի Դանիելյանի թեկնածությունը, հաշվի առնելով նաև վերջինիս կողմից նախորդ ուսումնական տարում իրականացրած աշխատանքները:

*Որոշեցին՝* Հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմը, ինչպես նաև նախագահ ընտրել Մերի Դանիելյանին:

*Լսեցին 3.* 2021-2022 ուսումնական տարվա աշխատանքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց 2021-2022 ուսումնական տարում մ/մ կատարած գործունեության կարևորության, ձեռքբերումների և հաջողությունների մասին: Մեթոդմիավորման անդամների կողմից կազմակերպվեց արդյունավետ քննարկում՝ 2021-2022 ուստարվա ընթացքում կատարված աշխատանքների և բացթողումների շուրջ:

*Արտահայտվեցին՝* Ռ. Խաչատրյանը, Ս. Ավանեսյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով հումանիտար առարկաների մ/մ նախագահի հաշվետվությունը, ինչպես նաև մեթոդմիավորման 2021-2022 ուսումնական տարվա կատարած աշխատանքները, հաշվի առնելով նաև առկա բացթողումները, գործունեությունը գնահատել լավ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2021-2022 ուսումնական տարվա կատարողականը:

*Լսեցին 4.* 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման հաստատման մասին հարցը :

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվա վերջին նիստում ներկայացվել է Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը: Զեկուցողն առաջարկեց հաստատել դպրոցական բաղադրիչը, համապատասխան որի առաջարկվեց դպրոցական բաղադրիչից 5-7-րդ դասարաններում դասաժամ հատկացնել «Ազգային երգ ու պար» առարկային:

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհաննիսյանը, Ռ. Խաչատրյանը, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նիստում «Մաթեմատիկա» առարկայի ուսուցիչներն առաջարկել էին դպրոցական բաղադրիչի մեկ դասաժամն 9-րդ դասարանում տրամադրել երկրորդ կիսամյակում, որպեսզի աշակերտներն ավելի լավ

նախապատրաստվեն ավարտական քննություններին: Ի պատասխան Ռուզաննա Խաչատրյանը նշեց, որ «Պատմություն» առարկան նույնպես քննական է և այդ առարկայի համար նույնպես աշակերտները պետք է հնարավորություն ունենան պատշաճ պատրաստվել ավարտական քննություններին, իսկ «Պատմություն» առարկայի թեմաները նույնպես համարեց ծավալուն, ընդգծելով, որ քննական թեստերում ընդգրկված են մեծ թվով թեմաներ և առաջարկեց դպրոցական բաղադրիչի տրամադրումը թողնել ամփոփոխ:

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանումը (կցվում է), այդ թվում՝ դպրոցական բաղադրիչից 5-7-րդ դասարաններում դասաժամ հատկացնել «Ազգային երգ ու պար» առարկային:

*Լսեցին 5.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, թեմատիկ պլանների, օրացուցային-թեմատիկ պլանների, առարկայական խմբակների ծրագրերի և օրացուցային-թեմատիկ պլանների, կաբինետների վարիչների աշխատանքային պլանների հաստատման մասին հարցերը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, դրանով նախատեսված հիմնական աշխատանքները: Նրա կողմից նշվեց, որ կաբինետների վարիչների կողմից անհրաժեշտություն է աշխատանքային պլաններ ներկայացնելը և ուսումնական տարվա ընթացքում նախատեսված աշխատանքների կատարելը: Զեկուցողը նշեց, որ թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան: Արտադասարանական խմբակների ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են ուսուցիչների կողմից, հիմք ընդունելով խմբակների կազմակերպման մասին համապատասխան կարգը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Շ. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ առարկայական ծրագրերում փոփոխություններ չկան և թեմատիկ պլանները, ինչպես նաև ՕԹՊ-ները կարող են կազմվել առաջնորդվելով այդ ծրագրերով, ինչպես նաև հիմք ընդունելով դպրոցում կիրառվող դասագրքերը: Ս. Ավանեսյանը նշեց, որ խմբակների ծրագրերը չպետք է կրկնեն դպրոցական դասընթացի ծրագիրը և որ անհրաժեշտ է ընտրել ավելի արդիական և ավելի գործնական թեմաներ՝ աշակերտների համար ավելի հետաքրքիր ու ավելի կիրառական դարձնելով խմբակները:

*Որոշեցին՝* Հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, ուսումնական պլանը, թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, կաբինետների վարիչների աշխատանքային պլանները, արտադասարանական խմբակների ծրագրերը և օրացուցային-թեմատիկ պլանները, վերջիններս ուղարկել ԿԳՄՍՆ՝ երաշխավորության նպատակով:

*Լսեցին 6.* Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների քանակն ու տեսակները հաստատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց թեմատիկ գործնական և գրավոր աշխատանքների կարևորության և դրանց անաչառ անցկացման մասին: Հիշեցրեց, որ թեմատիկ

գրավորների քանակը պետք է համապատասխանի շաբաթական ժամաքանակին՝ կիսամյակի կտրվածքով, սակայն նշեց, որ հնարավոր է թեմատիկ գրավորների քանակության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ՝ կախված ուսուցիչների առաջարկությունից, հավելեց, որ յուրաքանչյուր կիսամյակի մեկական գործնական աշխատանքի ընտրությունը կախված է ուսուցչի հայեցողությունից:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Շ. Հովսեփյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին թեմատիկ գրավոր աշխատանքների քանակության մեջ որևէ փոփոխություն չկատարել:

*Որոշեցին՝* Ապահովել ուսումնական տարվա ընթացքում պետական չափորոշիչներով սահմանված գրավոր աշխատանքների քանակն ու բազմազանությունը, այն է շաբաթական դասաժամերի քանակով տալ գրավոր աշխատանքներ՝ երկու կիսամյակների ընթացքում:

*Լսեցին 7.* Օրվա դասի պլանների (այսուհետ՝ ՕԴՊ) էլեկտրոնային տարբերակի ներդրման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իր կողմից հայտարարվել է, որ 2022-2023 ուսումնական տարվանից դպրոցում պարտադիր են լինելու ՕԴՊ-ների էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև նրա կողմից ներկայացվել է համապատասխան ձևանմուշը:

Զեկուցողը նշել է, որ հաստատման և կամ ներդրման դեպքում ՕԴՊ-ները պարտադիր են լինելու բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ա. Աբգարյանը:

Արտահայտվողները ողջունեցին զեկուցողի առաջարկը, նշեցին, որ ներկայացված ՕԴՊ-ի տարբերակը հարմար է և ուսուցչի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի ստեղծի, հատկապես այն դեպքում, երբ ՕԴՊ-ները կլրացվեն էլեկտրոնային տարբերակով, այդ տարբերակով նույնպես կարխիվացվեն և հետագայում կիրառության ժամանակ և դրանում փոփոխություններ կատարելու դեպքում դժվարություններ չեն լինի:

*Որոշեցին՝* 2022-2023 ուսումնական տարվանից ներդնել օրվա դասի պլանները (այսուհետ՝ ՕԴՊ), դրանք լրացնել բացառապես էլեկտրոնային տարբերակով: 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՕԴՊ-ները պարտադիր են բոլոր ուսուցիչների համար, անկախ նրանց աշխատանքային գործունեության տևողությունից:

Մ/Մ նախագահ՝ ________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2**

«22» սեպտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Մերի Դանիելյան(մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Թամարա Հովհաննիսյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացումը:
(զեկուցող Ս. Ավանեսյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
6. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Հումանիտարառարկաներիմեթոդմիավորմաննիստիօրակարգիհաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Լ. Գրիգորյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները նշեցին, որ մատենավարությունը հիմնականում կատարվում է ՕԹՊ-ների և ԹՊ-ների համապատասխան, մինչ այս պահը որևէ թերություն չի արձանագրվել: Ռ. Խաչատրյանը նշեց, որ և՛ ՕԹՊ-ները և ՕԴՊ-ները շատ կարևոր են և օգնում են ուսուցիչներին դասերը կազմակերպել պատշաճ, պլանավորված, սահմանված պահանջներին համապատասխան:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպումը ոչ միայն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամների, այլ նաև մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված անդամների միջև:

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհանիսյան, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, թե որքան արդյունավետ են փոխադարձ դասալսումները: Հավելելով, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները հնարավորություն են ստանում ոչ միայն ձեռք բերել նոր հմտություններ ու կարողություններ, այլ նաև առանձնակի ուշադրություն է դարձվում միջառարկայական կապերի, ինչպես նաև ուսումնական պրոցեսում ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառությանը:

Թամարա Հովհաննիսյանը կարևորեց ավագ գործընկերների մոտ կատարված փոխադարձ դասալսումները, ինչի շնորհիվ մանկավարժությամբ նոր զբաղվող ուսուցիչները հնարավորություն են ստանում ձեռք բերել նոր հմտություններ, կարողություններ, ծանոթանալ ուսումնական պրոցեսում արդիական և կիրառվող մեթոդներին ու հնարներին:

*Որոշեցին՝* Հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ, դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գործածել ուսուցման արդի մեթոդներ ու հնարներ, ՏՀՏ-ներ:

*Լսեցին 4.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-ուսուցչի օգնական համագործակցությունը, նշեց, որ ուսուցչի օգնական նախքան դասապրոցեսի սկսելը, պարտադիր կերպով պետք է ստանա համապատասխան ցուցումներ տվյալ օրվա դասի ընթացքում իրականացվող և իրականացվելիք աշխատանքների հետ կապված, որից հետո նոր մեկնարկի ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատանքը:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսուցիչ-ծնող համագործակցությանը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների և ծնողների միջև՝ առաջացած խնդիրները լուծելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* Մ.Դանիելյանը, Շ. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հաճախակի են հանդիպում խնդիրներ, երբ որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը որոշակի կերպով չի հաջողվում, կապված նրանց ուշ գնահատման, վկայագրման հետ, ինչպես նաև կախված ԿԱՊԿՈՒ աշակերտի խնդիրներից:

Հովսեփյանը նշեց, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը

բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար: Առաջարկեց ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որպեսզի տվյալ աշակերտներին հնարավոր լինի հնարավորինս ավելի մասնակից դարձնել դասապրոցեսին և ապահովել ԱՈՒՊ-ով, օրվա դասի պլանով սահմանված նպատակները:

*Որոշեցին՝* Ապահովել ուսուցիչ-ուսուցչի օգնական-ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչ-ծնող կապը, այն ավելի սերտացնել, ինչպես նաև հաճախակի կազմակերպել եռակողմ հանդիպումներ և քննարկումներ՝ ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների միջև, ըստ անհրաժեշտության ընդգրկել նաև ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին:

*Լսեցին 5.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված նախորդ ուսումնական տարվա թերությունները, առաջարկեց ժամանակին կատարել գրանցումները՝ հետագա խնդիրներից խուսափելու համար:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, էլեկտրոնային մատյանների ուշ լրացում (ժամկետից խախտում), լրացված թեմաների անհամապատասխանություն ՕԹՊ-ներին, որոշ աշակերտների մոտ գնահատականների բացակայություն: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենշաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 6.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրացուցային-թեմատիկ պլաններում տեղ գտած թերությունները, նշեց որ խնդիրների առաջացումը կապված է 2022թ. սեպտեմբերի 13-16–ը Սյունիքի մարզում դասապրոցեսի դադարեցման, իսկ հետո շաբաթ օրերով փոխարինելու հետ:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Շ. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ, ուսուցիչներին զգուշացնել, որ ՕԹՊ-ների թեմաների հերթականությանը անհրաժեշտ է ուշադիր հետևել և թույլ չտալ թեմատիկ, գործնական աշխատանքների թեմաների և ամսաթվերի փոփոխություն, անհրաժեշտության դեպքում քննարկել մ/մ նիստում, ստանալ թույլտվություն:

*Որոշեցին՝* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կողմից օրացուցային-թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների քննարկման և հաստատման մասին հարցն ընդունել ի գիտություն և ուսուցիչների հետ կազմակերպել քննարկումներ և ուղղորդումներ՝ թեմատիկ պլանների և օրացուցային-թեմատիկ պլանների շեղումներ թույլ չտալու նպատակով:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3**

«20» հոկտեմբերի 2022թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Թամարա Հովհաննիսյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Դասալսումների, ինչպես նաև փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում, օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
6. 2022-2023 ուսումնական տարում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Դասալսումների, ինչպես նաև փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ արդեն մեկնարկել են ուսումնական գծով փոխտնօրենի, ՄՄ նախագահի, ՄԿԱ գծով փոխտնօրենի և ԴԱԿ-ի կողմից դասալսումները, նաև կարևորեց փոխադարձ դասալսումները, և այս բոլորի արդյունքների անկողմնակալ քննարկումն ու ամփոփումը:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ փոխադարձ դասալսումների արդյունքների քննարկման ժամանակ ստացած խորհրդատվությունները, մասնագիտական առաջարկություններն ու նկատառումները ունեն միայն դրական նշանակություն: Ուսուցիչը պետք է կարողանա համադրել ուսուցման ավանդական և արդի մեթոդները:

Ս. Հարությունյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, այլ առարկաներից ստացած գիտելիքների կիրառմանը՝ ապահովելով միջառարկայական կապը և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

*Որոշեցին՝* Ավելի հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, դասալսումներ և դրանց արդյունքներով քննարկումներ, կապ պահպանել դպրոցի մյուս մեթոդմիավորումների ուսուցիչների հետ՝ նրանց ևս մասնակից դարձնելով դասալսումներին ու քննարկումներին: Կազմակերպել ցուցադրական դասեր նոր մեթոդներին, հմտություններին, կարողություններին ծանոթացնելու և դրանք կիրառելու համար:

*Լսեցին 4.* Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման, օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը առաջարկեց ճիշտ և համակարգված կազմակերպել օլիմպիադայի դպրոցական փուլին մասնացկող աշակերտների հետ տարվող աշխատանքները: Շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ ստուգել տրված հանձնարարությունների կատարումը և ըստ մշակված պլանի շարունակել աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը նպատակահարմար է, որ իրականացնեն մեթոդմիավորման նախագահը, տվյալ առարկաների ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի օգնականները, իսկ օլիմպիադաների հարցաշարերը նպատակահարմար է, որ կազմեն տվյալ առարկաների ուսուցիչները և ներկայացնեն ուսումնական մաս:

*Արտահայտվեցին՝* Շ.Հովսեփյանը, Ս. Ավանեսյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների մասնակցությունը և ցուցաբերվելիք արդյունքները: Նրանք նշեցին, որ մասնակից աշակերտները պետք է ունենան անհրաժեշտ գիտելիքներն ու կարողությունները, նաև հաջորդ փուլերին մասնակցելու և հաջողություններ արձանագրելու համար:

*Որոշեցին՝* Տալ հանձնարարականներ հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ անհրաժեշտության, լինել հետևողական, հանձնարարությունների ստուգումն ու հանձնարարումը կատարել ժամանակին: Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման աշխատանքների համար ընդգրկել մեթոդմիավորման նախագահին, տվյալ առարկաների ուսուցիչներին, ինչպես նաև ուսուցչի օգնականներին: Օլիմպիադաների հարցաշարերը տվյալ առարկաների ուսուցիչների կողմից կազմել և ներկայացնել ուսումնական մաս:

*Լսեցին 5.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին :

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցող Դանիելյանը կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ամենշաբաթյա կատարվող աշխատանքները և ճիշտ ու ամենօրյա գրանցումները:

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհաննիսյանը, Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ըստ անհրաժեշտության ժամանակին օգնություն ցույց տալ ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ՝ մատենավարության վարման կարգի վերաբերյալ:

*Որոշեցին՝* Կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, առաջացած խնդիրներն հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Ս.Ավանեսյանի հետ:

*Լսեցին 6.* 2022-2023 ուսումնական տարում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը առաջարկեց 5-9-րդ դասարաններում տնօրենության կողմից տալ գրավոր աշխատանքներ «Մայրենի» և «Հայոց լեզու» առարկաներից: Նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել առարկայական չափորոշչային պահանջները և տնօրենության կողմից բոլոր դասարաններում տալ թելադրություն: Զեկուցողն առաջարկեց աշխատանքները տալ կոդավորված, որպեսզի տրվող աշխատանքների միջոցով հնարավոր լինի պարզել մայրենի լեզվի իմացության իրական պատկերը, շնորհիվ նրա, որ ստուգման ժամանակ ուսուցիչները կլինեն հնարավորինս անկողմնակալ, ինչպես նաև առաջարկեց, որ ուսուցիչները ստուգեն ոչ թե միայն իրենց դասարանների գրավոր աշխատանքները, այլ այդ աշխատանքն իրականացվի խառը սկզբունքով:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյան

Արտահայտվողներն առաջարկեցին հաշվի առնելով չափորոշչային պահանջները թելադրության նյութն ընտրել թելադրության նյութերի ժողովածուից:

*Որոշեցին՝* Հաշվի առնելով նաև ուսուցիչների կողմից կատարված առաջարկությունները որոշեցին՝ բոլոր դասարաններում տալ թեմատիկ գրավոր աշխատանք՝ թելադրության տեսքով, նախապես ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի հետ միասին ընտրել թելադրության մի քանի

տարբերակ, որոնցից էլ պատահականության սկզբունքով առանձնացնել մեկը:

*Լսեցին 7.* Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասսայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

*Արտահայտվեցին՝* Շ. Հովսեփյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով փոխտնօրեն Ս. Ավանեսյանի առաջարկը՝ կազմել ժամանակացույց, ըստ որի կազմակերպել բաց դասեր, դաս-միջոցառումներ՝ առաջին կիսամյակի ընթացքում, հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ բոլոր ուսուցիչների կողմից:

*Որոշեցին՝* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Մ/Մ նախագահ՝ ________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«22» նոյեմբերի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

***Լսեցին 1.*** Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ,

սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական պրոցեսում կարևոր է հատուկ մանկավարժ-ուսուցչի օգնական-ուսուցիչ համագործակցությունը: Նշվեց անհատական աշխատանքի կարևորությունը, նախապես բոլոր կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը և թիմային աշխատանքի անհրաժեշտությունը: Հաջողության հասնելու համար առաջարկեց հրավիրել կլոր սեղաններ, կազմակերպել քննարկումներ՝ առաջացած խնդիրներին լուծումներ տալու և հետագա արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար:

*Արտահայտվեցին՝* Ռ. Խաչատրյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Աբգարյանը, Ա. Հովսեփյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է և շատ կարևոր աշխատանքի ճիշտ կազմակերպումը և բոլոր կողմերի մասնակցությունը: Առաջարկեց գործընթացին մասնակից դարձնել նաև ծնողներին և ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներին:

Արտահայտվողները ներկայացրին դասապրոցեսի ընթացքում առաջացած խնդիրները և նշեցին, որ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ աշակերտ պահանջում է անհատական մոտեցում, կարևորեցին ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՌԻՊ-ի շրջանակներում:

*Որոշեցին՝* Նպաստել հատուկ մանկավարժ-ուսուցչի օգնական-ուսուցիչ-ծնող-ԳՏՄԱԿ ներկայացուցիչ և բոլոր շահագրգիռ կողմերի հետ համագործակցությանը:

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող Մ.Դանիելյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց փոխտնօրեն Ավանեսյանին առաջացած խնդիրների և արձանագրված թերությունների մասին:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորվեց յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը մատենավարության գործում: Նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվում են թերություններ, հավելելով, որ պետք է վերահսկել ուսուցիչների կողմից կատարվող ամենօրյա աշխատանքները և մատենավարության հետ կապված խնդիրները վեր հանել, քննարկել, ժամանակին կատարել ուղղումներ:

*Որոշեցին՝* Իրականացնել ստուգումներ մ/մ նախագահի, ուսումնական մասով փոխտնօրենի կողմից: Իրականացնել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի ստուգում և վերահսկում: Լինել հետևողական ՕԹՊ-ների և կատարվող գրանցումների համապատասխանության հարցում:

Մ/Մ նախագահ՝ ________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«22» դեկտեմբերի 2022թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)
5. Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների

մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց անկողմնակալ վերաբերմունքը՝ հատկապես գրավոր աշխատանքների ստուգման հարցում: Հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղղագրության, կետադրության վրա:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողները անհրաժեշտ համարեցին՝ բոլոր դասարաններում, որքան հնարավոր է, սովորողներին իրազեկել մայրենի լեզվի կարևորության և գրագիտության իմացության անհրաժեշտության մասին:

Հարությունյանն առաջարկեց՝ հաճախակի 5-9-րդ դասարաններում տալ ուղղագրական, կետադրական առաջադրանքներ պարունակող առաջադրանքներ:

Դանիելյանը նշեց, որ անհրաժեշտ է ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել չափորոշչահեն ուսուցման սկզբունքներով:

*Որոշեցին՝* Հաճախակի կազմակերպել քննարկումներ՝ կիսամյակի ընթացքում տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ներկայացման և առաջացած խնդիրները վեր հանելու համար, գտնել լուծումներ, կատարել համապատասխան աշխատանքներ՝ հայոց լեզվի իմացությունը և գրագիտությունը բարձրացնելու համար, ինչպես նաև ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության գրավորների արդյունքները (կցվում է):

*Լսեցին 4.* Դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպման, անցկացման և արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց 8-9-րդ դասարաններում հումանիտար առարկաներից օլիմպիադաների կազմակերպումը: Հրապարակեց առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի արդյունքները, նշեց, թե ինչ բնույթի աշխատանքներ է անհրաժեշտ կատարել հաջորդ փուլերում հաջողություններ արձանագրելու համար:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է տարածքային փուլ անցած աշակերտների հետ կատարել լրացուցիչ աշխատանքներ, որպեսզի նրանք կարողանան պատշաճ ներկայանալ առարկայական օլիմպիադաների հաջորդ

փուլերում:

*Որոշեցին՝* Ապահովել առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլերում դպրոցի աշակերտների պատշաճ մասնակցությունն ու անհրաժեշտ պայմանները:

*Լսեցին 5.* Առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց ըստ չափորոշչային պահանջների տրված գրավոր աշխատանքների համապատասխանությունը ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված թեմատիկ, գործնական աշխատանքների քանակին: Նշեց թեմատիկ պլանների կատարողականի մասին:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ գործնական աշխատանքներ հանձնարարելիս ուսուցիչը ազատ է ընտրության մեջ, և որ թեմատիկ ու գործնական աշխատանքները տրված են ըստ ժամաքանակի:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել պարբերական ստուգումներ թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

*Լսեցին 6.* Առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքների վերլուծությունը: Նշեց, որ փոխադարձ դասալսումներն անհրաժեշտ են դասի որակը բարձրացնելու և մասնագիտական, մանկավարժական փորձի փոխանակման համար: Զեկուցողը մանրամասն նշեց տեղ գտած թերություններն ու բացթողումները, ինչպես նաև ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների ամփոփագիրը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորեց յուրաքանչյուր դասալսում, քանի որ այն միտված է օգնելու և աջակցելու ուսուցիչներին՝ հատկապես սկսնակներին: Նշվեց նաև դասալսումների քննարկման և խնդիրների վեր հանման մասին: Ս. Ավանեսյանը նշեց նաև փոխադարձ դասալսումների և քննարկումների ժամանակ մյուս մեթոդմիավորումների կազմում ընդգրկված ուսուցիչների հետ համագործակցության կարևորության մասին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների, բաց դասերի, դաս-միջոցառումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը), ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ թերությունները շտկելու ուղղությամբ:

*Լսեցին 7.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատյանում արձանագրվել են շեղումներ թեմատիկ պլաններից ու օրացուցային-թեմատիկ պլաններից, ինչպես նաև նկատվել են դեպքեր, երբ աշակերտների ԹԳԱ-ների գնահատականները չեն փոխանցվել համակարգ: Ավանեսյանը նշեց նաև, որ emis.am համակարգում երբեմն արձանագրվում են դեպքեր, երբ ուսուցիչների

կողմից փոխանցված գնահատականները և լրացված թեմաները չեն պահպանվում և ուսուցիչները ստիպված են լինում նույն աշխատանքը մի քանի անգամ կատարել: Հավելեց, որ արձանագրվել է նաև դեպք, երբ ուսուցչի էջով աշակերտներին փոխանցված գնահատականները չեն դիտարկվում, սակայն աշակերտների էլեկտրոնային օրագրերում դրանք առկա են:

*Արտահայտվեցին՝* Մ.Դանիելյանը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ժամանակին աջակցել ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ: Դանիելյանը նշեց, որ արդեն արձանագրվել են խնդիրներ կապված գրանցումների և ՕԹԳ-ների անհամապատասխանության հետ:

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Ս.Ավանեսյանի հետ:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6**

«03» հունվարի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2 Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկում:
(զեկուցող ՝ Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 6-րդ արտահերթ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը: Ամփոփեց մեթոդմիավորման նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները կատարվել են:

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Ս. Միրզոյանը:

Արտահայտվողները նշեցին քննարկված հարցերի կարևորության ու անհրաժեշտության մասին: Կատարված դասալսումների արդյունքների քննարկումները, դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպումը, ծրագրերի կատարողականի ստուգումները, էլեկտրոնային մատենավարության ստուգումների վերլուծությունը, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների քննարկումներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս առաջացած խնդիրները ժամանակին նկատել և աշխատանքներ տանել շտկելու, վերացնելու համար:

*Որոշեցին՝* Ուշադրություն դարձնել նախորդ մեթոդմիավորման նիստերի ժամանակ արձանագրված կետերի քննարկումներին, բացթողումները շտկել ժամանակին:

*Լսեցին 3.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում Հումանիտար առարկաներկաների մեթոդմիավորման ժամաբաժանման փոփոխությունները «Հայոց պատմություն», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Ազգային երգ ու պար» առարկաների հետ կապված (կցվում է ամփոփագիրը):

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավաանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելու ժամանակ նս քննարկվել է փոփոխությունների մասին հարցը: Նշվել է, որ «Հայոց պատմություն» առարկային տարեկան հատկացված է 1,5 դասաժամ, որից առաջին կիսամյակում՝ 6-րդ, 8-րդ, 9-րդ դասարաններում առաջին կիսամյակում հատկացվում է 1 դասաժամ, իսկ 7-րդ դասարանում 2 դասաժամ: Համապատասխանաբար, երկրորդ կիսամյակում, 6-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում հատկացվում է 2 դասաժամ, իսկ 7-րդ դասարանում՝ 1 դասաժամ: Այսպիսով կատարվում է օրինակելի ուսումնական պլանի պահանջը:

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 4.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների պարտադիր վերապատրաստման մասնակիցների ցանկի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացին մասնակցությունը, նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցիցի պարտադիր վերապատրաստմանը պետք է մասնակցեն Լիլիթ Սարգսյանը, Արտուր Հովսեփյանը և Ռոբերտ Արզումանյանը, քանի որ կա՛մ լրացել է նրանց պարտադիր վերապատրաստման 5 տարին, կա՛մ մինչ այդ երբեք չեն վերապատրաստվել:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ արդի մեթոդներին և հնարներին

տիրապետելը հատկապես անհրաժեշտ է դասի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք կարևորեցին պարտադիր վերապատրաստման գործընթացը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ կատարվող փոփոխություններին ու նորամուծություններին և կատարել փորձի փոխանակում:

*Որոշեցին՝* Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կազմակերպվող պարտադիր վերապատրաստումներին:

Մ/Մ նախագահ՝ ______________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7**

«06» փետրվարի 2023թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝</u>

1. Մերի Դանիելյան(մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրություն
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ՕԴՊ-ների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի

որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ մարտ ամսվա ընթացքում 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսումնասիրություն կկատարվի, որի նպատակն է ծանոթանալ աշակերտների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին առկա խնդիրների լուծման և դասի արդյունավետության բարձրացման հարցերի շուրջ:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների հետ, այլ ցանկալի է ընդգրկել նաև այլ մեթոդմիավորման ուսուցիչների:

Ս. Ավանեսյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

*Որոշեցին՝* Հաջորդիվ ժամանակահատվածում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաներից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցող Դանիելյանը կարևորեց էլեկտրոնային մատենավարության ստուգման ընթացքը և լրացման կանոնների պահպանումը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը

Ս. Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքի բարեխիղճ կատարումը, ըստ անհրաժեշտության խորհուրդներ տալը և համապատասխան դիտողություններ կատարելը:

*Որոշեցին՝* Պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ՕԴՊ-ների հետ կապված քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ՕԴՊ-ների անհրաժեշտության մասին, կարևորեց դրանց առկայությունը յուրաքանչյուր դասաժամի համար, քանի որ այս գործընթացի արդյունքում հեշտանում է ուսուցչի աշխատանքը և բարձրանում է դասի արդյունավետությունը: Ս. Ավանեսյանը ներկայացրեց նաև ներկայացված ՕԴՊ-ներում արդեն արձանագրված թերությունները, պատասխանեց

ուսուցիչների կողմից բարձրացված հարցերին:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողները առաջարկեցին երկրորդ կիսամյակի ՕԴՊ-ները կազմել և հանձնել ամեն շաբաթվա վերջում, իսկ աշխատանքները կազմակերպել ինչպես առաջին կիսամյակի ընթացքում:

*Որոշեցին՝* ՕԴՊ-ների հետ աշխատանքները ավարտել նշված ժամկետներում, իսկ առաջացած խնդիրների դեպքում դիմել ուսումնական մասի ղեկավար Ս. Ավանեսյանին:

Մ/Մ նախագահ՝ ________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8**

«10» մարտի 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյանը)
4. «ՆԶՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող Մ.Դանիելյան)
5. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

***Լսեցին 1.*** Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյանը)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության տվյալները: Նշեց, որ դիտարկման ժամանակահատվածում դասալսումներ, փոխադարձ դասալսումներ են իրականացվել դպրոցի 7-9-րդ դասարաններում, ինչպես նաև տվյալ մեթոդմիավորման և դպրոցի մյուս մեթոդմիավորումների անդամները մասնակցել են տվյալ առարկաների ցուցադրական դասերին, դաս-միջոցառումներներին: Զեկուցողը նշեց, որ այս ընթացքում իրականացված բոլոր դասալսումներից հետո դասվող մասնագետի հետ դասալսողները քննարկել են արդյունքները և դրանց հիման վրա կազմվելեն արձանագրություններ, ինչպես նաև իրականացված դասերն աշակերտակենտրոն էին:

Նշվեց նաև հետաքրքիր, ստեղծագործական մոտեցումներով իրականացված դասերի մասին, սթափ մտածողություն ունեցող և հետաքրքիր տրամաբանությամբ օժտված երեխաների մասին:

*Արտահայտվեցին՝* Ա. Սարգիսջանյանը, Լ. Սարգսյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Ա. Սարգիսջանյանը նշեց, որ դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Լ. Սարգսյանը նշեց, որ աշակերտների խոսքը սահուն էր, հստակ, անկաշկանդ կարողանում էին արտահայտել իրենց մտքերը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան և այն ներկայացնել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

*Լսեցին 4.* «ՆԶՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաների դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող Մ.Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց 8-9-րդ դասարաններում «ՆԶՊ» և 5-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» առարկաների ուսումնասիրությունը: Նշեց նաև, որ հիմնական դպրոցներում առավել կարևոր նշանակություն ունեն այս առարկաներից գիտելիքներ ունենալը:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ա. Հովսեփյանը, Լ. Գրիգորյանը

Արտահայտվողները նշեցին, որ ռազմահայրենասիրական կրթության և

ֆիզիկական պատշաճ դաստիարակության համար կարևոր է «ՆԶՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաների պատշաճ ուսուցման ապահովումը և առավել կարևոր է, որ վերոնշյալ առարկաների ուսուցումն իրականացվի առավելապես գործնական աշխատանքների զարգացման հիման վրա, որը կօգնի աշակերտների մոտ զարգացնել համապատասխան հմտություններ և կարողություններ:

*Որոշեցին՝* Հաջորդիվ ժամանակահատվածում «ՆԶՊ» և «Ֆիզկուլտուրա» առարկաներից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

*Լսեցին 5.* Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկեն Հումանիտար առարկաների մեթոդմիավորումում ընդգրկված «Հայոց պատմություն» և «Գրականություն» առարկաների քննական տոմսերի կազմման աշխատանքները, որոնք պետք է լինեն չափորոշչային պահանջներին ու ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց նաև, որ առաջիկայում հաստատվելու են քննական առարկաների խորհրդատվությունները:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ռ. Խաչատրյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

*Որոշեցին՝* Կազմել ավարտական քննությունների հարցաշարերը, հարցատոմսերը, հավանության արժանացնել ՄՄ նիստում և ներկայացնել տնօրենին՝ հաստատման, ինչպես նաև քննարկել ավարտական քննությունների ժամանակացույցերը:

*Լսեցին 6.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանարդեն արձանագրված թերություններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմաները չեն լրացվել կամ ՕԹՊ-ին համապատասխան չեն լրացվել, հավելեց, որ դրանք անհրաժեշտ սեղմ ժամկետում վերացնել:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ժամանակին աջակցել ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ: Դանիելյանը նշեց, որ արդեն արձանագրվել են խնդիրներ կապված գրանցումների և ՕԹՊ-ների անհամապատասխանության հետ:

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

Մ/Մ նախագահ՝ ____________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ______________________ Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի**
**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9**

«14» ապրիլ 2023թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Մերի Դանիելյան(մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
3. 5-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» և 8-9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
4. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի

որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց,որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* 5-9-րդ դասարաններում «Ֆիզկուլտուրա» և 8-9-րդ դասարաններում «ՆԶՊ» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ դասալսումներ իրականացվել են ամբողջ ամսվա ընթացքում։ Ֆիզկուլտուրա առարկան դպրոցում դասավանդվում է ըստ չափորոշչային պահանջների։ Դասալսումների և կազմակերպված բաց դասերի ընթացքում տեսանելի էին աշակերտների ունեցած գիտելիքները «Ֆիզկուլտուրա» առարկայից։ Նրանք տիրապետում էին խաղային կանոններին, նորմատիվային պահանջներին։ Այս ամենի վկայությունը դպրոցի ունեցած հաջողություններն են տարբեր մրցումների, սպորտլանդիաների մասնակցության ժամանակ, հաղթանակներ ունեցանք ոչ միայն մեր մարզում, այլ նաև մյուս մարզերում տարբեր մարզական միջոցառումների մասնակցության ընթացքում։

Դասալսումներ իրականացվել են նաև «ՆԶՊ» առարկայից։ Աշակերտները մեծ հետաքրքրությամբ և սիրով էին մասնակցում դասերին և ապահովում էին անհրաժեշտ գիտելիքների իմացությունը։ Դասալսումների ավարտին կազմակերպվել է ութերորդ դասարանների միջև դաս-միջոցառում, որի ընթացքում աշակերտները ցուցադրել են հրաձգությունից ունեցած գիտելիքները։

Զեկուցողը նշեց, որ այս ընթացքում իրականացված բոլոր դասալսումներից հետո դասվող մասնագետի հետ դասալսողները քննարկել են արդյունքները և դրանց հիման վրա կազմվելեն արձանագրություններ, ինչպես նաև իրականացվածդասերն աշակերտակենտրոն էին։

*Արտահայտվեցին՝* Ս.Հարությունյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները կարևորեցին «Ֆիզկուլտուրա» և «ՆԶՊ» առարկաների դասավանդումը և աշակերտների մասնակցությունը համայնքային, մարզային և միջմարզային միջոցառումներին ու մրցաշարերին, դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունն ու կրթության զարգացումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն «Ֆիզկուլտուրա» և «ՆԶՊ» առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան և այն ներկայացնել նաև մանկավարժական խորհրդի նիստում։

*Լսեցին 4.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների անցկացման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի և հայոց լեզվի, գրականության ուսուցիչների հետ քննարկման արդյունքում նախընտրելի է համարվել թելադրության տեսքով տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները։ Գրավոր աշխատանքների ժամանակ փոխտնօրենի կողմից ներկայացվելու են թելադրության մի քանի

տարբերակներ, որոնցից մեկն ընտրվելու է որպես 2-րդ կիսամյակի գրավոր աշխատանք:

***Արտահայտվեցին՝*** Ա.Սարգիսջանյանը, Շ.Հովսեփյանը, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը, օրինակ՝ կիրառել նախորդ փորձը և գրավորների ժամանակ օգտագործել ծածկագրեր:

Արտահայտվողները նշեցին նաև այն մասին, որ թելադրությունը գիտելիքների ստուգման լավագույն ձևն է հիմնական դպրոցում, քանի որ ընդգրկում է ուղղագրություն, կետադրություն, տողադարձ և այլ ենթաբաժիններ:

***Որոշեցին՝*** Հաշվի առնելով նաև ուսուցիչների կողմից կատարված առաջարկությունները որոշեցին՝ բոլոր դասարաններում տալ թեմատիկ գրավոր աշխատանք՝ թելադրության տեսքով, նախապես ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի հետ միասին ընտրել թելադրության մի քանի տարբերակ, որոնցից էլ պատահականության սկզբունքով առանձնացնել մեկը:

***Լսեցին 5.*** Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյաններում արդեն իսկ արձանագրված թերությունններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ մինչև մարտ ամիսը որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմաները չեն լրացվել կամ ՕԹՊ-ին համապատասխան չեն լրացվել, հավելեց, որ դրանք անհրաժեշտ սեղմ ժամկետում վերացնել:

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյան:

Արտահայտվողը նշել, որ անհրաժեշտ է հետևել տրված ցուցումներին և գրանցումներն ու գնահատումը կատարել ժամանակին:

***Որոշեցին՝*** Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

Մ/Մ նախագահ՝ ____________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ____________________ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«12» մայիսի 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի, քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող Ս. Ավանեսյան)
6. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերի ու հարցատոմսերի քննարկում, հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
8. 2023-2024 ուսումնական տարվա արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկում, հաստատում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 10-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց,որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 22-ի №10 և 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 495-Ա/2 հրամանները:

*Որոշեցին՝* Հաստատել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

*Լսեցին 4.* 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի, քննությունների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Հայոց լեզու»,

«Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաներից, իսկ «Ֆիզկուլտուրա» առարկայից հանձնելու են նորմատիվներ: Զեկուցողը հավելեց, որ ուսուցիչների կողմից կազմվել են «Գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների քննական տոմսերը, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա» առարկայի նորմատիվների սանդղակը, որոնք համապատասխանում եմ ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին, իսկ «Հայոց լեզու» առարկայի քննական թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

Զեկուցողը նշեց նաև, որ քննությունների ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԿԳՄՍ նախարարի հրամանը, ինչպես նաև ԳԹԿ-ի կողմից հաստատված ժամանակացույցը:

*Արտահայտվեցին՝* Ռ. Խաչատրյանը, Ա. Սարգիսջանյանը, Լ. Սարգսյանը, Շ. Հովսեփյանը, Ս. Հարությունյանը

Արտահայտվողները նշեցին, որ հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին:

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը (հարցաշար, հարցատոմս՝ էլեկտրոնային, ժամ.՝ առդիր):

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում «Մայրենի» առարկայից տնօրենության կողմից գրավոր աշխատանք են գրել 5-9-րդ դասարանների բոլոր աշակերտները. տրվել է թելադրություն: Ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում և ընթացիկ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում, 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից գրավորները նույնպես տրվել են կոդավորված տարբերակով, ինչը ստուգման ընթացքում ապահովել է անկողմնակալություն:

Զեկուցողը հայտնեց նաև տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա, առաջարկեց ուշադրություն դարձնել ուղղագրության, կետադրության վրա:

*Արտահայտվեցին՝* Ս. Հարությունյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողները անհրաժեշտ համարեցին՝ բոլոր դասարաններում, որքան հնարավոր է, սովորողներին իրազեկել մայրենի լեզվի կարևորության և գրագիտության իմացության անհրաժեշտության մասին:

Դանիելյանը նշեց, որ անհրաժեշտ է ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել չափորոշչահեն ուսուցման սկզբունքներով:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 6.* 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերի ու հարցատոմսերի, ժամանակացույցի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 120-200 դասաժամ բացականեր ունեցող աշակերտների հետ կապված կարգը: Նշեց, որ ըստ առարկաների

ուսուցիչների կողմից կազմվել են հարցաշարեր, հարցատոմսեր, ստուգողական աշխատանքներ, թեստային առաջադրանքներ: Բոլոր կազմած աշխատանքներն ընդգրկում են ամբողջ ուսումնական տարվա նյութը: Զեկուցողը նշեց նաև, որ կազմվել է ժամանակացույցը, հավելելով, որ 2022-2023 ուսումնական տարում դպրոցում առկա է 120-200 դասաժամ բացակայություն ունեցող միայն մեկ աշակերտ. 8-րդ «Գ» դասարան, Աղաբեկյան Արտակ Տիգրանի:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ անհրաժեշտ է սեղմ ժամկետում, կարգին համաձայն, կազմակերպել աշխատանքները, ինչպես նաև կարևորեց, որ բոլոր հարցատոմսերը կազմված լինեն 8-րդ դասարանի ամբողջ նյութից և ապահովված լինի եռամակարդակը:

*Որոշեցին՝* Հաստատել 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի վերաքննության ստուգողական աշխատանքների, ստուգարքի և քննական հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը (հարցաշար, հարցատոմս՝ էլեկտրոնային, ժամ.՝ առդիր):

*Լսեցին 7.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության հետ կապված ընթացիկ թերությունները, շեշտելով, որ որոշ ուսուցիչների մոտ դիտարկվում է գնահատականների սակավություն, խնդրեց, որ ժամանակին կատարեն գրանցումները, գնահատումները:

*Արտահայտվեցին՝* Ս.Ավանեսյանը:

Ավանեսյանը նշեց, որ արդեն իսկ որոշ ուսուցիչների մոտ արձանագրվել են մատենավորության հետ կապված խնդիրներ: Հորդորեց լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին ու պատշաճ, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մաս:

*Որոշեցին՝* Մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանին:

*Լսեցին 8.* 2023-2024 ուսումնական տարվա արտադասարանական խմբակների ծրագրերի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի առաջարկությամբ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում արդեն իսկ խմբակներն իրականացվել են դրանց համար կազմված ծրագրերով, հավելեց, որ 2022-2023 ուսումնական տարվա համար ուսուցիչների կողմից կազմվել, հաստատվել են խմբակների ծրագրերը, որոնք ուղարկվել են ԿԳՄՍ՝ երաշխավորության, և դրանց գերակշիռ մասը երաշխավորվել են: Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ներդնելու նպատակով ուսուցիչների կողմից կազմվել են արտադասարանական խմբակների նոր ծրագրեր: Այդ ծրագրերն են՝ «Ընթերցանություն և ասմունք», «Խոսքի զարգացում», «Հեքիաթների աշխարհում», «Հայ կինո», «Վարսավիրություն», «Թատրոն»:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ ներկայացված բոլոր ծրագրերն անհրաժեշտ է քննարկել, ուշադրություն դարձնել դրանց համապատասխանությանը հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր

իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգին:

*Որոշեցին՝* Հավանության արժանացնել ներկայացված արտադասարանական խմբակների ծրագրերը և հաստատման նպատակով քննարկել մանկավարժական խորհրդի նիստում (խմբակների ծրագրերը կցվում են էլեկտրոնային տարբերակով):

*Լսեցին՝9.* ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Ա» դասարանի աշակերտ Վահե Մինասյանի և 9-րդ «Բ» դասարանի աշակերտուհի Եվա Զաղայանի ծնողները դիմումներ են ներկայացրել, որոնցով խնդրել են իրենց երեխաներին ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը նշեց, որ Վահե Մինասյանի և Եվա Զաղայանի ծնողների դիմումի համաձայն վերոնշյալ աշակերտներին պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

*Որոշեցին՝* Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ 9-րդ դասարանների ԿԱՊԿՈՒ ներքոնշյալ աշակերտներին՝ Վահե Մինասյանին և Եվա Զաղայանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Մ/Մ նախագահ՝ ____________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ____________________ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

«13» հունիս 2023թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռոբերտ Արզումանյան
7. Աննա Աբգարյան
8. Արփինե Տոռոզյան
9. Սոնա Միրզոյան
10. Լուսինե Գրիգորյան
11. Ռուզաննա Խաչատրյան
12. Արտուր Հովսեփյան

**Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, հումանիտար ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, կաբինետների վարիչներ**

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
7. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ ՄՄ անդամներ)
8. 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
9. Մեթոդմիավորման կազմի փոփոխություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքներն ու

խնդիրները:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

11. 2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով է իրականացվելու:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

12. 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանում:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ս. Ավանեսյան)

*Լսեցին 1.* Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ քննության արդյունքները սպասվածից ցածր էին: Թեև տարվել էին համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, իրականացվել էին խորհրդատվություններ, բայց և այնպես որակի առումով արդյունքները գոհացուցիչ չէին:

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» առարկաներից ավարտական քննությունների ամփոփագիրը:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ռ. Խաչատրյանը

Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: 2023-2024 ուսումնական տարում ավարտական քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել բանավոր խոսքը զարգացնելու, լեզվական գրագիտությունը ավելացնելու և աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ երկու կիսամյակների ըմթացքում կատարված

ստուգումները, ամենշաբաթյա վերահսկողությունը, փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից աջակցությունը, քննարկումները և հարցերի պարզաբանումները փոփոխություններ են արձանագրել էլեկտրոնային մատենավարության հարցում:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Որոշակի խնդիրներ կարելի է ասել հաղթահարվեցին՝ գրանցումներն ու գնահատումները կատարվեցին թեթևակի շեղումներով: Սակայն, որոշները շարունակում են թերություններով աշխատել, որոնք հիմնականում կապված են թեմաների ուշ լրացման, հաստատված ՕԹՊ-ներից որոշակի շեղումների հետ, սակայն շեշտեց, որ ի տարբերություն 2021-2022 ուսումնական տարվա և 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի, 2-րդ կիսամյակում արձանագրված թերություններն ու բացթողումները համեմատաբար քիչ են:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա էլեկտրոնային մատենավարության վարման արդյունքները և այն համարել բավարար:

*Լսեցին 5.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում հումանիտար առարկաների մասնախմբի ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը: Նշեց, որ կազմակերպված դասերն ու միջոցառումները ուսուցանող էին, երեխաները կիրառում էին արդի տեխնոլոգիաներ ու հնարներ, կատարում վերլուծություններ, զարգացնում քննադատական մտածողությունը, օգտագործում բանավեճի տարբեր տեսակների կիրառման համար կարողունակությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Զեկուցողը ներկայացրեց բաց դասերի և դաս-միջոցառումների մասին տեղեկատվությունը:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ս. Հարությունյանը

Ս. Ավանեսյանը նշեց, որ ցուցադրական դասերը պետք է լինեն ծրագրավորված, ուսուցիչը պետք է հաշվի առնի դասի ընթացքի հնարավոր տարբերակները,բայց ոչ երբեք նույն դասը արդեն նախապես անցկացրած լինի և դա բազում փորձերի վրա հիմնված դաս-շոուի վերածվի: Նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի,դաս միջոցառումների կատարողականը:

Ս.Հարությունյանը կարևորեց աշակերտների պատրաստականությունը,քանի որ նրանցից է կախված դասի հաջողությունը, արդյունավետությունը: ՌԻսուցիչը ուղղորդողի դեր է կատարում և զարգացնում է դասապրոցեսը: Նա պետք է պատրաստ լինի անակնկալ շրջադարձերի և խրախուսի աշակերտների ազատ,անկաշկանդ մտածողությունը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը (կցվում է):

*Լսեցին 6.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Ա. Գևորգյանը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում

իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքից հիմնականում գոհ է, սակայն նշեց, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել: Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ: Քննարկում ծավալվեց հաջորդ ուսումնական տարում բացթողումները վերացնելու հարցի շուրջ:
Խմբավարներն առանձին-առանձին ներկայացրեցին 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները՝ հաշվետվությունների տեսքով:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյան
Ս. Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

*Լսեցին 7.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:
Մեթոդմիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկվեցին: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքները:

*Արտահայտվեցին՝* Ա. Սարգիսջանյանը, Շ. Հովսեփյանը
Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

*Լսեցին՝8.* 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները: Կատարված դասալսումները փաստում են, որ յուրաքանչյուր լավ պլանավորված դասի ընթացքում նս առաջանում են խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ:

Զեկուցողը նշեց նաև հաջողված դասերի մասին: Կարևորվեց նաև դասալսումներին ուսումնական մասի ղեկավար Սերգեյ Ավանեսյանի, ՄԿԱ գծով փոխտնօրեն Արմիդա Գևորգյանի, մեթոդմիավորման մյուս ուսուցիչների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների մասնակցությունը և դրանց արդյունքում ծավալված քննարկումները:

*Արտահայտվեցին՝* Լ. Սարգսյանը, Ա. Աբգարյանը

Լ. Սարգսյանը նշեց, որ դասալսումներն ու կազմակերպված քննարկումները օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը:

Ա. Աբգարյանը նշեց, որ դիտողություններն էլ արվում են միայն թերությունները շտկելու և ավելի բարձր արդյունքներ արձանագրելու համար:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին՝9.* Մեթոդմիավորման կազմի փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվանից նպատակահարմար է Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն» առարկաները տեղափոխել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ենթակայության, որպեսզի նոր ՀՊՉ-ների բնագավառների համապատասխան առարկաները բաժանված լինեն բնագավառներին համապատասխան, Տարրական դասարանների մեթոդմիավորումում մնան միայն դասվարների կողմից դասավանդվող առարկաները, ինչպես նաև վերոնշյալ առարկաների ուսուցիչների աշխատանքները կազմակերպվեն համակարգված և ղեկավարվեն 1 մեթոդմիավորման նախագահի կողմից:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ նման մոտեցումը ողջունելի է, հավելեցին, որ նախկինում նույնպես Տարրական դասարանների մեթոդմիավորումում եղել են միայն դասվարները: Նաև առաջարկեցին 2023-2024 ուսումնական տարում, հնարավորության դեպքում ստեղծել ևս մեկ նոր մեթոդմիավորում, որում ընդգրկել Հումանիտար առարկաների մեթոդմիավորումում ընդգրկված առարկաներից մի մասը: Մասնավորապես, Հումանիտար առարկաների մեթոդմիավորումում թողնել «Հայոց լեզու», «Գրականություն», «Մայրենի», «Հայոց պատմություն» (այս բնագավառի մյուս առարկաները նույնպես) առարկաները, իսկ «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ազգային երգ ու պար» առարկաների համար ստեղծել նոր մեթոդական միավորում:

*Որոշեցին՝* Տարրական դասարանների մեթոդմիավորման կազմում ընդգրկված «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա», «Երաժշտություն» առարկաները տեղափոխել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ենթակայության, ինչպես նաև մանկավարժական խորհրդի նիստում հանդես գալ առաջարկությամբ՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմից առանձնացնել «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ազգային երգ ու պար» առարկաները և դրանց համար ստեղծել նոր մեթոդական միավորում:

*Լսեցին՝10.* ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)

Զեկուցողները բոլորի ուշադրությունը հրավիրեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների

հետ կատարված աշխատանքների վրա: Ծատրյանը ներկայացրեց երեխաներից որոշների մոտ առաջացած խնդիրները և կատարված աշխատանքները: Քննարկվեցին տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: Արփինե Ծատրյանը նշեց, որ ուսուցիչների կողմից պատշաճ լրացվել են ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները, ինչպես նաև ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում Ավանեսյանի կողմից մշակված դիտարկման թերթիկներով դպրոցի բոլոր դասարաններում իրականացվել են դիտարկումներ և աշակերտների մոտ խնդիրների առկայության դեպքում ուսուցիչների և ուսուցչի օգնականների հետ համապեղ իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող յուրաքանչյուր աշխատանք, նշեցին, որ այն պետք է լինի շարունակական:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների մասին զեկուցումը:

*Լսեցին՝11.* 2023-2024 ուսումնական տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսուցումը նոր չափորոշիչներով իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2023 թվականի ապրիլի 25-ից Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում մեկնարկել են «Հանրապետության հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերին համապատասխան տնօրենների, փոխտնօրենների ու ուսուցիչների վերապատրաստում և մենթորների կողմից աջակցության իրականացում» դասընթացները, որոնց մասնակցել են նաև դպրոցի մանկավարժները: 2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 5-րդ, 7-րդ դասարաններում ուսուցումն իրականացվելու է նոր չափորոշիչներով, հետևաբար անհրաժեշտ է ժամանակին նախապատրաստվել նոր ուսումնական տարվան, հիմք ընդունելով նոր ՀՊՉ-ն ու առարկայական ծրագրերը, կազմել նոր թեմատիկ պլանները, օրացուցային-թեմատիկ պլանները, քանի որ արձակուրդից հետո հաշված օրեր կմնան և այդ ընթացքում դժվար կլինի իրականացնել բոլոր նախատեսվող աշխատանքները:

*Արտահայտվեցին՝* Ռ. Խաչատրյանը

Ռ. Խաչատրյանը նշեց, որ որպես մենթոր պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված բոլոր ուսուցիչներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* 2023-2024 ուսումնական տարվանն ընդառաջ սկսել թեմատիկ պլանների և օրացուցային-թեմատիկ պլանների մշակման, ինչպես նաև թեմատիկ գրավորների աշխատանքները:

*Լսեցին՝12.* 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ս. Ավանեսյան)

Զեկուցող Ս. Ավանեսյանը հանգամանալից ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները որոնք սպասվում են նոր ուսումնական տարում՝ կապված նոր չափորոշչային պահանջների հետ:

Զեկուցող Մ. Դանիելյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարում 6-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում նախնական ժամաբաժանումը պետք է իրականացվի հին չափորոշիչներով, իսկ 5-րդ և 7-րդ դասարաններում՝ նոր

չափորոշիչներով, համապատասխան որի որոշ առարկաների ժամաքանակի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ:

*Արտահայտվեցին՝* Ռ. Խաչատրյանը, Լ. Սարգսյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաշվի առնել 5-րդ և 7-րդ դասարաններում սպասվող փոփոխությունները՝ կապված հումանիտար առարկաների առարկայական փոփոխությունների հետ: Ռ. Խաչատրյանը նշեց, որ որպես մենթոր պատրաստ է աջակցել մեթոդմիավորման բոլոր անդամներին, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումներում ընդգրկված բոլոր ուսուցիչներին նոր չափորոշիչներով աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2023-2024 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ ________________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ ________________________ Ս. Ավանեսյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման**

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում *Հումանիտար առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *11 հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *11 արձանագրություն:*

*Հումանիտար առարկաների մեթոդմիավորման* նիստերի տվյալները՝ ստորև.

| № | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ | ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 24.08.2022թ. | 7 |
| 2 | 2 | 22.09.2022թ. | 6 |
| 3 | 3 | 20.10.2022թ. | 7 |
| 4 | 4 | 22.11.2022թ. | 4 |
| 5 | 5 | 22.12.2022թ. | 7 |
| 6 | 6 | 03.01.2023թ. | 4 |
| 7 | 7 | 06.02.2023թ. | 5 |
| 8 | 8 | 10.03.2023թ. | 6 |
| 9 | 9 | 14.04.2023թ. | 5 |
| 10 | 10 | 12.05.2023թ. | 9 |
| 11 | 11 | 13.06.2023թ. | 12 |

*Հումանիտար առարկաների մեթոդմիավորման* սույն արձանագրությունների մատյանը կազմված է *41* էջից:

Մ/Մ նախագահ՝ __________________ Մ. Դանիելյան

Ուսումնական գծով փոխտնօրեն՝ __________________ Ս. Ավանեսյան

«13» հունիսի 2023թ.